ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, Հեռ., ֆաքս՝ (011) 564-772

«31» 01 2024 թ. Թիվ 3/1-29

hetq.am-ի լրագրող՝
Սամսոն Մարտիրոսյանին

Տեղեկացնում եմ, որ Ձեր՝ 22.01.2024թ.-ի ՄԳ/6922-24 թվագրմամբ հարցումը ստացվել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության Քրեական ոստիկանության գլխավոր վարչությունում, ինչի կապակցությամբ հայտնում եմ, որ հարցմամբ ներկայացված <Տելեգրամ>, <ՏիկՏոկ>, ինչպես նաև այլ սոցիալական ցանցերում <Արդար դատավոր> անվամբ էջով կատարված քրեորեն պատժելի արարքներով ՀՀ ՆԳՆ ոստիկանությունում կան արձանագրված դեպքեր և դրանցով համապատասխանաբար նախաձեռնված քրեական վարույթներ: Բացի այդ, ՀՀ ՆԳՆ ոստիկանության կողմից նշված քրեական վարույթներով ձեռնարկված միջոցառումներով, այդ թվում և միջազգային համագործակցության շրջանակներում կատարված հարցումների արդյունքում պարզվել է հարցմամբ նշված սոցիալական կայքերի խնդրո առարկա <Արդար դատավոր> անվամբ հանդես եկող օգտատիրոջ ինքնությունը և վերջինիս ամբողջական տվյալները, որը և փոխանցվել է համապատասխան մարմնին՝ քրեական վարույթի շրջանակներում քննարկելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով: Հայտնում եմ նաև, որ նշված օգտատերը մշտապես գտնվում է ՀՀ իրավապահ մարմինների ուշադրության կենտրոնում և ձեռնարկվում են համապատասխան միջոցառումներ վերջինիս քրեական պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Հարգանքով

Պետի առաջին տեղակալ,
ոստիկանության գնդապետ ***Ա. Պետրոսյան***

կատ՝ Ի.Եփրիկյան, հեռ. 077 02-10-05